# ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**<<ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ԵՎ ՉՎՆԱՍԱԶԵՐԾՎԱԾ ՏԱՐԱՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1**. «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» 2012 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-30-Ն օրենքի (այսուհետ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին ենթակետում «շենքերն ու շինությունները» բառերից հետո լրացնել «համաձայն՝ Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ) դասակարգման» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ և 11-րդ կետեր.

<<10) ***վերապատրաստման վկայական (սերտիֆիկատ)՝*** վտանգավոր բեռներ փոխադրելու պահանջների մասնագիտական ստուգման դրական արդյունքի հիման վրա տրված սահմանված նմուշի փաստաթուղթ.

11. ***վերապատրաստում՝*** վտանգավոր բեռների փոխադրման պահանջների կազմակերպման, անվտանգ փոխադրումների իրականացման, վթարների հավանականությունը նվազեցնելու, իսկ վթարային արձագանքման վերաբերյալ մասնագիտական ուսուցման։>>:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետում <<փոխադրումների համար>> բառերը փոխարինել <<փոխադրումներին>> բառով.

2) 4-րդ կետում հանել <<և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետները>> բառերը.

3) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ կետ.

<<7) սահմանում է վտանգավոր բեռներ փոխադրելու վերապատրաստման գործունեություն իրականացնելու լիցենզավորման կարգը։>>։

**Հոդված 3.** Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով

«8) տրամադրում է վտանգավոր բեռներ փոխադրելու վերապատրաստման վկայական (սերտիֆիկատ)։»։

**Հոդված 4.** Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի <<փոխադրողին հանձնել>> բառերից հետո լրացնել ««Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ) պահանջներով սահմանված» բառերը։

**Հոդված 5.** Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով

«6) պետք է անցնեն վտանգավոր բեռներ փոխադրելու վերապատրաստում և ունենան վարորդի վերապատրաստման վկայական (սերտիֆիկատ)։ Վտանգավոր բեռներ փոխադրելու որակավորման քննություններ ընդունելու և վարորդի վերապատրաստման վկայական (սերտիֆիկատ) տրման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։».

2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ և 5-րդ մասեր.

«4. Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցը պետք է ունենա վտանգավոր բեռներ փոխադրելու տրանսպորտային միջոցի հաստատման վկայական (սերտիֆիկատ), որի ձևը և տրման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

5. Վտանգավոր բեռներ փոխադրող կազմակերպությունը պետք է ունենա վտանգավոր բեռների փոխադրումների ոլորտի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան վտանգավոր բեռների անվտանգ փոխադրման գործընթացը կազմակերպող անվտանգության մասնագետ, որը պետք է անցնի վերապատրաստում և ունենա մասնագիտական վերապատրաստման վկայական (սերտիֆիկատ), որի ձևը և տրման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։»։

**Հոդված 6.** Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «իրավական ակտերի» բառերից հետո լրացնել «, «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ)» բառերը։

**Հոդված 7**. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

**1)** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից։

2)Սույն օրենքի 2-րդ հոդվածով Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 4-րդ և 5-րդ մասերով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներն ընդունվում են 2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակում։

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի՝

1. 19-րդ հոդվածի «15. Տրանսպորտի բնագավառ» բաժնի 15.5-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

| | |
|---|---|
| «-վտանգավոր բեռներ փոխադրելու վերապատրաստման գործունեություն իրականացնելու համար՝ տարեկան | բազային տուրքի 200-ապատիկի չափով» |

2. 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 59-րդ, 60-րդ և 61-րդ կետերով.

| | |
|---|---|
| «59. Վտանգավոր բեռներ փոխադրելու վարորդի վերապատրաստման վկայական (սերտիֆիկատ) տալու համար՝ | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| 60. Վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության մասնագետի վերապատրաստման վկայական (սերտիֆիկատ) տալու համար՝ | բազային տուրքի 10-ապատիկի չափով: |
| 61. Վտանգավոր բեռներ փոխադրելու տրանսպորտային միջոցի հաստատման վկայական | բազային տուրքի 10-պատիկի չափով»: |

(սերտիֆիկատ) տալու համար՝

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 137.8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ մասով՝

«8. Հայաստանի Հանրապետության տարածքում վտանգավոր բեռներ փոխադրելու օրենսդրության պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով։»։

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից։

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի «16. Տրանսպորտի բնագավառ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| «8. | Վտանգավոր բեռներ փոխադրելու վերապատրաստման գործունեություն | ԿՄ | - | - | Ո - |

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից: